



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

29.08.2014թ.

Միրելի ուսուցիչներ, թանկագին աշակերտներ, հարգարժան ծնողներ

Ի սրտե շնորհավորում եմ բոլորիդ՝ նոր ուսումնական տարվա մեկնարկն ավետող Սեպտեմբերի 1-ի՝ Գիտելիքի և դպրության տոնի կապակցությամբ:

Ուսումնական ամեն մի նոր տարեմուտի ձեզանից յուրաքանչյուրը սպասում է անթաքույց հուզմունքով, հույսով և հավատով, ձգտում իրագործել նախորդ տարում անկատար մնացած խնդիրներն ու նպատակները: Համոզված եմ, որ մաշտոցյան ուխտի պատգամները իբրև հավատամք կրող մեր մանկավարժները սրբորեն կկատարեն ի վերուստ իրենց վերապահված առաքելությունը, և նրանց անմնացորդ նվիրումի ու կրթական բարեփոխումների արդյունքում կձևավորվի գիտելիքահեն հասարակության մեջ իր արժանի տեղն ունեցող, քաղաքացիական բարձր գիտակցությամբ օժտված հայրենապաշտ սերունդ:

Միրելի աշակերտներ, անշեղորեն հետևեք դպրոցական առաջին զանգի սեպտեմբերյան դողանջների խորհրդին, որպեսզի կյանքի գալիք փորձություններում երբեք չխարխալեք և կարողանաք պատվախնդրությամբ ու ջանասիրությամբ զորակցել մեր անկախ պետության հարաճուն զարգացմանն ու հզորացմանը:

Այս համազգային հրաշագեղ տոնի կապակցությամբ առանձնահատուկ ջերմությամբ շնորհավորում եմ գիտելիքի զարմանահրաշ աշխարհի դռները նոր բացող մեր առաջին դասարանցիներին:

Մեկ անգամ ևս սրտանց շնորհավորում եմ բոլորիդ և մաղթում անսասան առողջություն, անսպառ եռանդ, ուժ ու կորով, անձնական երջանկություն, ընտանեկան բարեկեցություն, ամենայն բարիք և ամենանվիրական իղձերի իրականացում:

Հարգանքով՝

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ